ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ԻԲՐԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Հոդվածում քննարկվում է կրթական գործընթացի կարևորագույն բաղադրիչի՝ գնահատման մեխանիզմներն ու առանձնահատկությունները, քանի որ վերջին շրջանում կրթական ծրագրերի բարեփոխման համատեքստում մեծ ուշադրություն է հատկացվում հատկապես ակնկալվող վերջնարդյունքների ճշգրիտ սահմանմանն ու գնահատման համակարգին: Այս համատեքստում գնահատումը նախատեսում է կրթական վերջնարդյունքների հետ կապված տեղեկատվության կամ ապացույցների անընդհատ հավաքագրում, վերլուծություն և կիրառում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. գնահատում, ՄԿԾ բարելավում, գնահատման համակարգ, գնահատման սկզբունքներ, գնահատման չափանիշներ, գնահատման գործիքներ:

Կրթական համակարգում «**գնահատում**» հասկացությունը կիրառվում է՝ պարզելու ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Այն ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է, օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը: Վերջին շրջանի մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ գնահատումը ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման, կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ է: Սովորողի պատրաստվածության մակարդակն ու նրա անձնային-անհատական որակները որոշելու համար գնահատվում են՝

1.չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացումը.

2.սովորածը գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները.

3.մտավոր գործունեության մակարդակը [1]:

Մեկ այլ սահմանմամբ՝ գնահատումը անհատի գիտելիքները, ընկալումն ու հմտությունները հավաստող վկայությունների՝ զբաղմունքի նկարագրով և/կամ որակավորման չափորոշչով (դրա մասնագիտական մոդուլներով) սահմանված չափանիշներին համապատասխանության վերլուծության գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը ուսումնական տվյալ կիսամյակում սովորողներ իձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման աստիճանի ստուգումն է, ինչպես նաև ուսուցման որակի բարելավումն ու վերահսկումը:

Գնահատումը կարող է լինել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական վերաբերմունքից: Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական վերաբերմունքից և դատողություններից: Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցումները: Կրթական ծրագրերի վերանայման ժամանակ հանձնարարելի է հնարավորինս

խուսափել սուբյեկտիվ գնահատման գործիքներից և առավելապես զարկ տալ օբյեկտիվ գնահատման գործիքների ներդրմանը [2, էջ 3]:

Այս գործընթացի կարևորագույն գործոններից մեկը գնահատման որակն է, հետևաբար անհրաժեշտ է, որ դրա ընթացքը լինի խիստ, բայց և արդար, որ գնահատման ընթացքում առաջադրվող խնդիրները համապատասխանեն զբաղմունքի նկարագրով կամ համապատասխան կրթական (որակավորման) չափորոշչով սահմանված պահանջներին:

Հմտությունների, գիտելիքի և ընկալման կիրառումը կարողությունների վրա հիմնված ուսումնառության և գնահատման առանցքային տարրն է: Գնահատվողները պետք է կարողանան ցույց տալ, որ իրենք յուրացրել են դասընթացի ողջ նյութերը և կարող են հաջողությամբ և սահմանված պահանջներին համապատասխան կիրառել սովորածը:

Այսինքն՝ գնահատելիս պետք է հստակ հասկանալ, թե արդյոք գնահատվողը (ուսանողը)՝

- ունի՞ պահանջվող գիտելիքներ և կարողունա՞կ է կիրառել դրանք,
- ի՞նչ հմտությունների է տիրապետում և որտե՞ղ կարող է դրանք օգտագործել,
- ո"ր չափով է տիրապետում որակավորման չափորոշչով սահմանված բոլոր կարողություններին,
- կարողունա՞կ է դրսևորել հաղորդակցական հմտություններ և խոսքը ներկայացնել գրագետ և հստակ շարադրանքով:

Մասնագիտական գրականության մեջ մատնանշվում են գնահատման տարբեր մեթոդներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը [3, էջ 11]:

Հայտորոշիչ գնահատում. դասընթացից կամ թեմայից առաջ գիտելիքների, հմտությունների և կարողությունների նախնական արձանագրումն է՝ պլանավորելու հետագա ծրագիրը:

Ձևավորող գնահատում. նպաստում է հետադարձ կապի ամրապնդմանը: Աջակցում է առաջընթացին, չի նշագրվում և չի արտահայտվում ամփոփիչ գնահատականի մեջ: Գնահատման այս տեսակի նպատակն է վերահսկել սովորողի ուսուցումը՝ ապահովելու շարունակական հետադարձ կապը, որը կարող է օգտագործվել դասավանդողի կողմից՝ կատարելագործելու դասավանդումը և սովորողի կողմից՝ սովորելու գործընթացը: Ավելի կոնկրետ ձևավորող գնահատականը՝

- օգնում է ուսանողներին բացահայտելու իրենց ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև այն նպատակային (թիրախային) ոլորտները, որոնք կարիք ունեն կատարելագործման,
- օգնում է դասավանդողներին տեսնելու, թե որտեղ են ուսանողներն առավելապես ճիգ գործադրում: Ձևավորող գնահատման օրինակ է, երբ ուսանողին առաջարկվում է լսարանում գծագրել գաղափարների (կոնցեպցիայի) քարտեզ՝ցույց տալու, թե որքանով է ուսանողը հասկացել թեման կամ ներկայացնել մեկ կամ երկու նախադասություն, որոնք պարունակում են դասախոսության հիմնական գաղափարը և այլն:

Չափանիշային գնահատում. գնահատումն արվում է մշակված հստակ չափանիշներով. ուսանողի հաջողությունները չեն դիտվում ընդհանուր կուրսի համեմատությամբ:

Վարկանիշային գնահատում. ուսանողի համեմատական գնահատումն է մյուս ուսանողների ընդհանուր կազմում: Այն սովորաբար կիրառվում է մրցակցությունը խրախուսելու նպատակով:

Ամփոփիչ կամ գումարային գնահատում. ամփոփիչ գնահատման նպատակն է՝ գնահատել ուսանողների գիտելիքները ուսումնական մեկ միավորի վերջում՝ համեմատելով դրանք որոշ չափանիշների կամ հենանիշերի (benchmark) հետ:

Գումարային գնահատման օրինակներից են՝

- միջանկյալ քննությունը.
- վերջնական նախագիծը.
- թեստը:

Ամփոփիչ գնահատումից ստացված տեղեկությունը որպես ուղեցույց կարող են գործածել ինչպես ուսանողները, այնպես էլ դասավանդողները՝ հետագա կուրսերում իրենց գործունեությունը ծավալելու նպատակով:

Գնահատման գործիքներից են՝ քննություն, ստուգարք, թեստ, նախագիծ, չգնահատվող վիկտորինա, շնորհանդես, թղթապանակ, էսսե, խմբային ներկայացում, անհատական ներկայացում, սցենարով խնդրի լուծում, բանավեճ և այլն:

Ցանկացած գնահատում, եթե այն սուբյեկտիվ չէ, պետք է ունենա գնահատման որոշակի գործիքներ, իսկ գնահատման գործիքները պետք է ճշգրիտ կերպով արտացոլեն որակավորման յուրաքանչյուր մակարդակի համար պահանջվող գիտելիքները, ընկալումը և հմտությունները:

Ստորև փորձենք ներկայացնել գնահատման որոշ տարածված գործիքներ.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԸ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Քննություն	Սա իր հերթին կարող է լինել մի քանի տեսակ՝ փակ գրքով, բաց գրքով, բանավոր, գրավոր և այլն, որը հնարավորություն է տալիս ստուգել ուսանողի գիտելիքները՝ սահմանված չափանիշներին համապատասխան: Քննության տեսակների մանրամասնումը կներկայացնենք աղյուսակի տեսքով:
Կուրսային աշխատանք	Սա ևս ունի դրսևորման մի քանի ձև, որը նույնպես կներկայացնենք աղյուսակի տեսքով: Սա հարմար գործիք է՝ ստուգելու ուսանողի փաստարկված մտածողությունը, տեղեկացվածության աստիճանը՝ խնդրո առարկայի վերաբերյալ, և դատողություններ անելու ու շարադրելու ունակությունը:
Գործնական աշխատանք	Գործնական աշխատանքը գնահատման այն ձևերից է, որը շատ լայն հնարավորություն է տալիս տարատեսակ գործիքների համատեղման համար: Որպես գործնական աշխատանք կարելի է հանձնարարել ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանքներ, գնահատել դաշտային աշխատանքը և այլն: Վերջիններիս համառոտ նկարագրությունը ևս կբերենք առանձին աղյուսակի տեսքով:
Ինքնագնահատում	Հարցաշար, որն օգնում է գնահատվողին պատասխանել հետևյալ հարցերին՝ • ինչ գիտեմ, • ինչ կարող եմ անել/կատարել, • նախկինում կատարած աշխատանքի արդյունքների ինչ վկայություններ կարող եմ ներկայացնել: Գնահատման այս գործիքը մշակողները որոշում են, թե ինչ մանրամասնությամբ թեկնածուն պետք է պատասխանի այս հարցերին, և թե յուրաքանչյուր հարցը քանի միավոր կարող է գնահատվել:
Հանձնառություն	Հանձնառությունը որևէ խնդիր լուծելու առաջադրանք է՝ հստակ ուղեցույցներով և տևողությամբ: Հանձնառությունն ավելի կառուցակարգված է, քան նախագիծը:
Լրացման հարցեր	Գնահատվողից պահանջվում է լրացնել առաջադրված պնդման մեջ բաց թողնված բառերը (հատվածները):
Ընկալում	Առաջադրված տեքստին վերաբերող հարցեր, որոնց տրված պատասխանները գնահատում են գնահատվողի՝ բառերի, արտահայտությունների, մասնագիտական տերմինաբանության ընկալումը:

Փակ հարցեր	Պահանջվում է տրված հարցերի մի քանի պատասխանների տարբերակներից ընտրել միակ ճիշտ տարբերակը: Պատասխանների որոշ տարբերակներ կարող են հիմնավոր թվալ, բայց ճիշտ չլինել:
Հարցերի և պատասխանների համապատասխանություն	Պահանջվում է գտնել համապատասխանություն տրված հարցերի և պատասխանների շարքերում:
Բանավոր (կամ անհատական) հարցազրույց	Սա կառուցակարգված զրույց է (սովորաբար՝ դեմ առ դեմ), անմիջականորեն գնահատվողից տեղեկություններ ստանալու նպատակով: Այս գործիքը հատկապես կիրառելի է, երբ անհրաժեշտ են գործընթացների իմացության կամ փորձառական ուսումնառության վկայություններ: Պատասխանները կարող են արձանագրվել հարցաթերթի տեսքով:
Բանավոր ներկայացում	Գնահատվողից պահանջվում է ներկայացնել նախապես պատրաստված խոսք՝ հղման, զեկուցման կամ կարծիքի արտահայտման տեսքով: Բանավոր ներկայացումը կարող է օգտագործվել որպես գրավոր պատասխանի այլընտրանք կամ որպես ինքնուրույն մեթոդ (եթե, օրինակ՝ անհրաժեշտ է գնահատել թեկնածուի բուն բանավոր խոսքը):
Կատարում	Գնահատվողից պահանջվում է որոշակի պայմաններում ցուցադրել որևէ աշխատանքային խնդրի կատարում՝ դրսևորելով մասնագիտական հմտություններ, տեխնիկա, գիտելիք և ընկալում:
Գործնական վարժություն	Գնահատվողից պահանջվում է ցուցադրել մի շարք գործնական հմտություններ: Գնահատումը կարող է իրականացվել գործողությունների արդյունքի (արտադրանքի), դրանց ընթացքի կամ այդ երկուսի համադրության հիման վրա:
Նախագիծ	Նախագիծը պահանջում է զգալի ծավալի աշխատանք, որի շրջանակներում գնահատվողները պետք է կատարեն հետազոտություն և պլանավորում, խնդիրներ լուծեն ու գնահատում անցկացնեն՝ որոշակի ժամանակահատվածում: Որոշ նախագծեր գործնական բաղադրիչ են ներառում: Նախագծերն ավելի ընդգրկուն և ստեղծագործական են, քան հանձնառությունները, և կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբակային տարբերակով:
Հարցաթերթ	Հարցաթերթի միջոցով իրականացվում է կառուցակարգված գրավոր հարցազրույց:
Հակիրճ պատասխան պահանջող հարցեր	Այս տիպի հարցերը պահանջում են նախապես սահմանված, մի քանի բառից բաղկացած պատասխաններ և կարող են պարունակել նաև թվեր, գծապատկերներ, գրաֆիկներ, դիագրամներ և այլն: Թեև այս հարցերը նախատեսված են հիմնականում մնացորդային գիտելիքները ստուգելու համար, սակայն կարող են օգտագործվել նաև գիտելիքի, օրինակ՝ մաթեմատիկական հասկացությունների կիրառման ունակությունը գնահատելու համար:
Կառուցակարգված հարցեր	Կառուցակարգված հարցերի առանցքը որևէ իրավիճակի նկարագրությունն է, որին հաջորդում են դրան վերաբերող մի շարք հարցեր: Այդ նկարագրությունը կարող է պարունակել տեքստ, գծապատկեր, նկար, տեսագրություն և այլն:
Այլընտրանքային պատասխանով հարցեր	Այս դեպքում գնահատվողից պահանջվում է պատասխանել՝ բերված պնդումը ճիշտ է, թե սխալ: Սովորաբար կիրառվում է տեղեկություններ մտաբերելու կամ տարանջատելու ունակությունները գնահատելու համար:

Կրթական վերջնարդյունքները պարունակում են գնահատման նվազագույն չափանիշներ: Գնահատման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել մի քանի հանգամանք՝

- կարևոր է, որ գնահատումն ուղղված լինի ուսանողի առաջընթացին.
- ապահովի հավասարակշռությունը ամփոփիչ և ձևավորող գնահատման միջև.
- ձևավորող գնահատումը ուսանողներին հնարավորություն տա պատրաստվելու և պրակտիկա ձեռք բերելու մինչև ամփոփիչ գնահատումը.
- գնահատումը պետք է տեղեկույթ պարունակի այն մասին, թե որ չափով է ուսանողը կարողանում անել այն, ինչը որ նախատեսված էր ծրագրի ակնկալվող ելքային արդյունքներով [4, էջ 7]:

Մասնագիտական գրականության մեջ հանձնարավում է գնահատման չափանիշները մշակել՝ հաշվի առնելով վերջնարդյունքը կամ տրված հանձնարարությունները:

Գնահատման չափանիշները սահմանվում են ավելի կոնկրետ, քան վերջնարդյունքները:

Չափանիշները սահմանում են կատարման որակը, որը ցույց կտա, որ ուսանողը հասել է համապատասխան մակարդակի, իսկ այդ մակարդակը կարող է լինել վերջնարդյունքներով նկարագրված նվազագույն շեմը [5, էջ 9]:

Ուսանողի առաջընթացը բնութագրվում է երկու կարևոր գործոններով՝

- ուսանողի ինքնուրույնության մակարդակով.
- աստիճանաբար մեծացող պատասխանատվության մակարդակով:

Գնահատումն ու ուսանողներին տրվող հանձնարարությունները պետք է ապահովեն ուսանողի ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը՝ հասնելու նշված մակարդակին:

Գնահատումը նախատեսում է կրթական վերջնարդյունքների հետ կապված տեղեկատվության կամ ապացույցների անընդհատ հավաքագրում, վերլուծություն և կիրառում: Գնահատումը կատարվում է նաև հետադարձ կապի ապահովման միջոցով [6, էջ 13]:

Գնահատումը հեշտացնելու համար կարելի է մշակել ռուբրիկներ:

Տեսակ	Նկարագրություն	Առավելություն	Դատողություն
Փակ գրքով	Ավանդական մեթոդ է, որը հնարավորություն է տալիս ստուգելու տեղեկացվածությունը և գիտելիքները:	Հնարավորություն է տալիս ստուգելու գիտելիքները:	Հմտությունների և կարողությունների ստուգման հնարավորություն չի տալիս:
Բաց գրքով	Հնարավորություն է տալիս օգտագործելու հետազոտական աղբյուրներ:	Հնարավորություն է տալիս զարգացնելու գիտական մոտեցումները և զարգացնելու տեղեկատվական գրագիտությունը:	Մակերեսային ուսուցման և ուրիշի մտքերը սեփականաշնորհելու վտանգ է պարունակում:

Համակարգչով ստուգում	Համալիր ստուգման հնարավորություն է տալիս՝ կիրառելով տարբեր քննական ֆորմատներ: Կարող է ներառել տեսա-, աուդիո-, գրաֆիկական և այլ նյութեր:	Ճկուն և դինամիկ ստուգում է:	Ռեսուրսային առումով թանկարժեք է:
Բանավեճ	Որևէ թեմայի շուրջ խմբային բանավեճի կազմակերպում, որը ուսուցման սոկրատեսյան ձև է համարվում:	Կարող է զարգացնել քննադատական մտածողությունը, տարբեր տեսանկյունների արտահայտման հռետորական արվեստը և փաստարկումը:	Ժամանակի և արտահայտչամիջոցների ընտրությունը ազատ է:

Կուրսային աշխատանք

Տեսակ	Նկարագրություն	Առավելություն	Դատողություն
Զեկույց	Թեմայի ներկայացում երկրորդական աղբյուրների հիման վրա:	Զարգացման գնահատման համար լավ տեսակ է. փաստարկներ, ինֆորմացիա, դատողություններ:	Առկա է գրագողության վտանգ:
Էսսե	Ազատ ոճով գրված և հեղինակի խորհրդածություններով հագեցած ակնարկ:	Երևում է անհատականությունը և ճկունությունը, ակադեմիական հղումների փորձը:	Ակադեմիական ձևաչափ է, բարդ է և ոչ մատչելի:
Հոդված թերթում	Լրագրողական մոտեցմամբ հրապարակախոսական ոճով թեմայի ներկայացում:	Մատչելի տարբերակ է, երևում է անհատական զարգացումը, կարող է լինել խմբային:	Անմիջական է, ինֆորմատիվ, կարող է պարունակել քննադատական մոտեցում:
Հոդված գիտական ամսագրում	Գրախոսվող ամսագրում հրատարակությունը գնահատման լավ ձևավորող և ամփոփիչ գործիք կարող է լինել:	Ձևավորում է գրավոր գիտական խոսքի հմտություն:	Ունի դիրեկտիվ բնույթ, ամսագիրը թելադրում է իր ձևաչափը:

Գործնական աշխատանք

Տեսակ	Նկարագրություն	Առավելություն	Դատողություն
Անհատական շնորհանդես	Ներկայացում նյութական ռեսուրսների կիրառմամբ, ցուցադրելու համար գիտելիքները, ըմբռնումն ու ընկալումը:	Զգայական առումով բարդ է, պահանջում է խորը իմացություն և հաղորդակցական հմտություններ:	Բարդության պատճառով ոչ բոլորի համար է հասանելի:
Խմբային շնորհանդես	Խմբային նախագծի կամ գիտահետազոտական նախագծի արդյունքների ներկայացում:	Ավելի դինամիկ է և ինտերակտիվ, կարող է նպաստել գիտելիքների փոխանակմանը:	Ավելի հեշտ է ներկայացնել, քանի որ խմբային է:
Կեղծ հարցազրույց	Կոնկրետ աշխատանքի, հանձնարարության հետ կապված հարցազրույց:	Մասնագիտական հմտությունների զարգացման համար շատ լավ գործիք է:	Կարող է մակերեսային լինել:
Դաշտային աշխատանք	Գնահատվում են ուսանողի հմտությունները դաշտային պայմաններում:	Գնահատման դինամիկ ձև է տարբեր համատեքստերում, տարբեր տարածքներում:	Թույլ է տալիս ուսանողին լուծել բարդ կազմակերպչական հարցեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:
2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:
3. Էլիզաբետա Միտրոյ, Գնահատման գործընթացի կազմակերպման և իրականացման ուղեցույց, 2014:
4. Bennett, R., A Critical Look at the Meaning and Basis of Formative Assessment. USA: ETS, 2009.
5. Gardner, J., Assessment and Learning, 2nd Edition. UK: SAGE Publications Ltd, 2012.
6. Carless, D., From Testing to Productive Student Learning: Implementing Formative Assessment in Confucian-Heritage Settings. USA: Routledge, 2011.

ОЦЕНКА КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ УЧЕБНОГО ПРОЦЕССА

НАИРА АКОПЯН

Доктор психологических наук, профессор

НАРИНЭ ВАРДАНЯН

Кандидат филологических наук, доцент

ГАЯНЭ ГРИГОРЯН

кандидат биологических наук, доцент

В статье рассматриваются механизмы и особенности важнейшей составляющей учебного процесса – оценки, поскольку в последнее время в контексте реформы учебных программ большое внимание особенно уделяется точному определению ожидаемых окончательных результатов и системе оценки. В таком контексте оценка рассматривается как постоянный набор, анализ и применение информации или доказательств, связанных с окончательными образовательными результатами.

ASSESSMENT AS A SIGNIFICANT COMPONENT IN EDUCATIONAL PROCESS

NAIRA HAKOBYAN

Doctor of Psychology, Professor

NARINE VARDANYAN

PhD in Philology, Associate Professor

GAYANE GRIGORYAN

PhD in Biology, Associate Professor

The article discusses assessment as a significant component of educational process. The assessment mechanisms and peculiarities are listed in the framework of the recent reformations in educational sphere. In this context assessment is investigated as educational outcome or everlasting and constant evidence collection, analysis and usage. The authors prove the fact that assessment should be for the learner and with the learner as an ongoing process.